ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ԴԻՄԱԿԱՅՈՒՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆՀԱՏԱԿԱՆԱՑՎԱԾ ՄԵՆԹՈՐՈՒԹՅԱՆ և ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ (TOR)

Այս առաջադրանքը ***«Դիմակայուն քաղաքացիական հասարակություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում»*** ծրագրի մի մասն է, որը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից և համաֆինանսավորվում Չեխիայի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կողմից՝ «Անցումային համագործակցություն» ծրագրի շրջանակում և իրականացվում է «Մարդը կարիքի մեջ» կազմակերպության կողմից: Ծրագրի նպատակն է ամրապնդել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) դերը որպես դիմակայուն, ներառական և վստահելի կառավարման գործիչներ, որոնք առաջ են մղում Արևելյան գործընկերության տարածաշրջանում ժողովրդավարացման գործընթացը: Այն նաև նպատակ ունի հզորացնել նորաստեղծ քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, որպեսզի նրանք դառնան քաղաքացիական տարածքի ավելի արդյունավետ պաշտպաններ և ժողովրդավարացման, բարեփոխումների և վերականգնման գործընթացների շարժիչ ուժեր Արևելյան գործընկերության տարածաշրջանում:

1. ՆՊԱՏԱԿՆԵՐ

Ծրագրի իրականացման ողջ ընթացքում ծրագրի թիրախ հանդիսացող ՔՀԿ-ները ավարտեցին իրենց կազմակերպական կարողությունների ինքնագնահատման մասնակցային գործընթացը՝ օգտագործելով «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի կողմից մշակված և տարբեր համատեքստերում փորձարկված մասնակցային կազմակերպական կարողությունների գնահատման գործիքը (Organizational Capacity Assessment Tool (OCAT)), մշակեցին ռազմավարական փաստաթուղթ և կազմակերպական զարգացման գործողությունների ծրագիր (Development Action Plan (DAP)):

Ծրագրի թիրախ ՔՀԿ-ները նաև մասնակցել են կարողությունների զարգացման մի շարք դասընթացների՝ հետևյալ թեմաներով.

- ✓ Թիմային աշխատանք. ժամանակի կառավարում, կոնֆլիկտների լուծում, բանակցային հմտություններ;
- ✓ Առաջարկների կազմում;

- ✓ Մշտադիտարկման և գնահատման համակարգերի մշակում;
- ✓ Ռազմավարական հաղորդակցություն և ահառուների/շահագրգռ կողմերի ներգրավվածություն;
- ✓ ՔՀԿ-ների համար ֆինանսական կառավարման և աուդիտի սկզբունքներ;
- ✓ Շահերի պաշտպանություն և քաղաքականության երկխոսություն;
- ✓ ՔՀԿ-ների բարեկեցության և դիմադրողականության ռազմավարություններ:

Կարողությունների զարգացման վերապատրաստման դասընթացներից բացի, յուրաքանչյուր ՔՀԿ-ն սահմանել է **երկու առաջնահերթ ոլորտ** , որոնցում նրանք կարիք ունեն նպատակային մենթորության՝ կարողությունները, վստահությունը և կայունությունը զարգացնելու նպատակով: Ակնկալվում է, որ մենթորության միջոցով նրանք կստանան ուղեցույցեր, գիտելիքներ և գործնական հմտություններ, որոնք նրանց հնարավորություն կտան արդյունավետորեն պլանավորել, կառավարել և ֆինանսավորել իրենց համայնքային նախաձեռնությունները:

Այս աշխատանքային առաջադրանքը սահմանում է մենթորների կարճաժամկետ միջամտությունը և պարտականությունները: Նրանք կտրամադրեն **անհատականացված աջակցություն 3 օրվա (24 ժամ) ընթացքում յուրաքանչյուր ՔՀԿ-ին յուրաքանչյուր թեմայի շուրջ:**

<u>Ստորև բերված աղյուսակում ամփոփված են ծրագրի թիրախ հանդիսացող ՔՀԿ-ները՝ նրանց ընտրած մենթորական թեմաներով, բացահայտված կարիքներով, նախընտրելի ամսաթվերով և նախընտրելի ձևաչափով:</u>

N	ՔՀԿ	ԹԵՄԱ 1	Բացահայտված կարիքներ	Նախընտրելի ամսաթվեր	Նախընտրելի ձևաչափ	ԹԵՄԱ 2	Բացահայտված կարիքներ	Նախընտրելի ամսաթվեր	Նախընտրելի ձևաչափ
1	ՔՀԿ 1	**Առաջարկի/հայտա դիմումի մշակում**	Ձեռք բերել խնդիրների ձևակերպման, առաջարկների կազմման և բյուջետավորման հմտություններ: Բարելավել տարբեր դոնոր ծրագրերի հետ համապատասխան բարձրորակ և մրցունակ հայտեր ներկայացնելու կարողությունը:	Սեպտեմբեր - դեկտեմբեր, 2025	հիբրիդ	**Դիմացկունության պլանավորում**	Ապահովել կազմակերպության կայունությունը՝ հաշվի առնելով կազմակերպության ռեսուրսները, գործունեության ոլորտները և աշխարհագրական դիրքը: Հատուկ	Սեպտեմբեր- դեկտեմբեր, 2025	հիբրիդ

							ուշադրություն դարձնել ֆինանսական ռեսուրսների բաշխմանը և սոցիալական ձեռնարկատիրության ստեղծմանը:		
2	**ՔՀԿ 2**	**Շահերի պաշտպանություն և քաղաքականության պլանավորում**	Քաղաքականության վերլուծության հիմունքների, շահագրգիռ կողմերի ներգրավման ռազմավարությունների ուսումնասիրություն: Հանրային արշավների մշակում և որոշումների կայացման գործընթացում ներգրավվածություն: Օգտագործելով շահերի պաշտպանության գործիքները՝ վերլուծել իրավական և քաղաքական միջավայրը:	Օգոստոս - սեպտեմբեր, 2025	առցանց և հիբրիդային	**Բարեկեցություն և թիմային դիմացկունություն**	Սովորել, թե ինչպես ապահովել թիմի անդամների հուզական և հոգեբանական բարեկեցությունը: Աշխատանքային այրումների (burnout) կառավարում: Ինչպես բարելավել թիմային մթնոլորտը:	Օգոստոս - սեպտեմբեր, 2025	առցանց և հիբրիդային
3	**ՔՀԿ 3**	**Առաջարկի/հայտա դիմումի մշակում**	Բարելավել առաջարկներ գրելու հմտությունները՝ գործնական ուղեցույցի	Նոյեմբեր Դեկտեմբեր, 2025	առցանց	**Մոնիթորինգ և գնահատում**	Ծանոթանալ այն գործիքներին, որոնք թույլ կտան ՔՀԿ-	Նոյեմբեր - Դեկտեմբեր, 2025	առցանց

			և ծրագրային մտածողության զարգացման միջոցով:				ներին մշակել արդյունավետ մեթոդաբանություն մոնիտորինգի և գնահատման համար:		
4	ՔՀԿ 4	**Շահերի պաշտպանություն և քաղաքականության պլանավորում**	Համայնքային բազմազան խնդիրների, մասնավորապես՝ բնապահպանական խնդիրների վրա ազդող քաղաքականության վերանայում և դրանց արձագանքում: Շրջակա միջավայրի հարցերը քաղաքական օրակարգում ներառելու եղանակներ: Քաղաքացիական հասարակության հետ արդյունավետ համագործակցության մեխանիզմների ուսումնասիրություն: Քաղաքականության վերլուծության գործիքներ: Հաջողված շահերի պաշտպանության	սկսած 2025 թվականի սեպտեմբերի երկրորդ կեսից	առցանց	**Դրամահավաք**	Միջոցների հայթայթման ռազմավարության մշակում: Ֆինանսավորման համար հայտադիմումի/առաջարկի պատրաստում: Միջազգային դոնորների կողմից ֆինանսավորվող ծրագրերում հայտադիմումի մշակման գործնական ուսուցում: Եկամուտների դիվերսիֆիկացման գործնական մոդելների ուսումնասիրություն:	2025 թվականի օգոստոսի երկրորդ կեսից	առցանց

			արշավների ուսումնասիրություն:						
5	**ՔՀԿ 5**	**Առաջարկի/հայտա դիմումի մշակում**	Բարելավել դրամաշնորհային նախագծերի մշակման թեմայով գիտելիքները՝ կենտրոնանալով պրակտիկայի և համակարգված ծրագրային մոտեցումների զարգացման վրա:	Հոկտեմբեր - Դեկտեմբեր, 2025	առցանց	**Բարեկեցություն և թիմային դիմացկունություն**	Բարձրացնել թիմի արդյունավետությունը, դժվար/ճգնաժամային իրավիճակներում արդյունավետ գործելու ունակությունը՝ հաշվի առնելով վերջին ժամանակների ֆինանսական անկայունությունը և ոչ կառավարական կազմակերպություններիվրա ազդող գլոբալ փոփոխությունները:	Հոկտեմբեր - Դեկտեմբեր , 2025	առցանց

6	**ՔՀԿ 6**	**Շահերի պաշտպանություն և քաղաքականության պլանավորում**	Շահերի պաշտպանության գործողությունները սկսելու համար անհրաժեշտ քաղաքականության և առկա ռեսուրսների վերլուծություն: Շահերիր պաշտպանության արշավների գործնական վերլուծություն:	Սեպտեմբեր - Հոկտեմբեր, 2025	հիբրիդ	**Համայնքային աշխատանք**	Ստանալ անմիջական գիտելիքներ համայնքային աշխատանքի կայուն մոտեցումների և ընթացակարգերի վերաբերյալ: Ուսումնասիրել համայնքային աշխատանքի առանձնահատկությունները և ուսումնասիրել ընդլայնման ռազմավարությունները՝ նպատակ ունենալով ի վերջո ընդլայնել ՔՀԿ-ի ազդեցությունը համայնքի սահմաններից դուրս՝ ամբողջ մարզով:	Սեպտեմբեր - Հոկտեմբեր, 2025	հիբրիդ
7	**ՔՀԿ 7**	**Ներքին կառավարում**	Զարգացրել հմտություններ՝ թիմի արդյունավետությունը բարձրացնելու, ներքին կառավարման	Սեպտեմբեր - դեկտեմբեր, 2025	հիբրիդ	**Անձնակազմի արդյունավետության զարգացում**	Զարգացնել անձնակազմի ներուժը արդյունավետորեն բացահայտելու և	Սեպտեմբեր- դեկտեմբեր, 2025	հիբրիդ

			մարտահրավերներին դիմակայելու համար:				օգտագործելու եղած ռեսուրսները և կարողությունները:		
8	ՔՀԿ 8	**Միջազգային դոնորների կողմից հայտարարված առաջարկների մրցույթին դիմելու պրակտիկան**	Ուսումնասիրել միջազգային դոնորների կողմից տրամադրվող դրամաշնորհային հիմնական հնարավորությունները, սովորել դիմումի ընթացակարգերը, հասկանալ, թե ինչպես պատրաստել նախագծի առաջարկ և ուսումնասիրել նմանատիպ ֆինանսավորման ծրագրերն և հարթակներին մուտք գործելու եղանակները:	2025 թվականի օգոստոսի վերջին շաբաթը	հիբրիդ	**Առցանց քրաուդֆանդինգ**	Իմանալ գրանցման, պրոֆիլ ստեղծելու և միջազգային դրամահավաք հարթակներին դիմելու գործընթացի մասին: Բացահայտել դրամահավաքի (online crowdfunding) արշավ սկսելու հիմնական քայլերը:	2025 թվականի սեպտեմբեր	հիբրիդ
9	ՔՀԿ 9	**Բարեկեցություն և թիմային դիմակայունություն**	Ինչպե՞ս պայքարել անձնակազմի գերհոգնածության դեմ: Ի՞նչ ներքին մեխանիզմներ կարելի է մշակել թիմի բարեկեցությունն ապահովելու համար:	Սեպտեմբեր-դեկտեմբեր, 2025	հիբրիդ	**Մոնիթորինգ և գնահատում**	Գնահատման թերթիկներից բացի, ի՞նչ մեխանիզմներ կարող ենք օգտագործել այդ գործառույթը կիրառելու համար: Սովորել, թե	Սեպտեմբեր-դեկտեմբեր, 2025	հիբրիդ

							ինչպես իրականացնել մոնիթորինգ և գնահատում, եթե ՔՀԿ-ն թիմում չունի այդ ոլորտի մասնագետ:		

Նշում . Մենթորական նիստերը կարող են միավորվել այն դեպքերում, երբ ՔՀԿ-ները նույնականացրել են նմանատիպ թեմաներ, և մենթորները կարող են դիմել մի քանի թեմաներ քննարկելու համար՝ ելնելով իրենց փորձառությունից:

Այս մրցույթին կարող են դիմել ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձինք:

2. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մենթոր(ներ)ը պատասխանատու կլինեն՝

- Վերանայել յուրաքանչյուր ՔՀԿ-ի կողմից սահմանված առաջնահերթ թեմաների/կարիքների համառոտ նկարագրությունը:
- Պատրաստել յուրաքանչյուր կազմակերպության համար անհատականացված մենթորական մոդուլներ/սեսիաներ (անհատապես կամ կլաստերներով՝ կախված կարիքներից):
- Կազմակերպել 3-օրյա (24 ժամ) կառուցվածքային մենթորություն և խորհրդատվություն ընտրած թեմաների շուրջ:
    - **Նշում.** Մենթորության ժամերը (24 ժամ 3 օրվա ընթացքում) կարող են ճշգրտվել և բաշխվել այնպես, որ լավագույնս համապատասխանեն և՛ մենթորի, և՛ ՔՀԿ-ի հասանելիությանը՝ ազդեցությունը մեծացնելու համար:
- Տրամադրել գործիքներ, ձեռնարկներ կամ ստուգաթերթիկներ՝ ուսուցումը ամրապնդելու համար:
- Առաջարկել գործնական առաջարկություններ յուրաքանչյուր ՔՀԿ-ին՝ հիմնվելով դիտարկված կարիքների վրա:
- Աջակցել ՔՀԿ ներկայացուցիչներին համապատասխան տեղեկատվության, գրականության աղբյուրների և հետագա գործողությունների (անհրաժեշտության դեպքում) ձեռք բերման հարցում:
- Պատրաստել և ներկայացնել մանրամասն զեկույցներ գործունեության արդյունքների, արտացոլումների և հետագա աջակցության համար առաջարկությունների վերաբերյալ:

3. ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ ՔՀԿ-ների կարողությունների զարգացման ոլորտում;
- Նշված ոլորտում ապացուցված գիտելիքներ;
- Ֆասիլիտացիայի, մենթորության և խորհրդատվության տրամադրման հմտություններ;
- Նորաստեղծ և համայնքային կազմակերպությունների առջև կանգնած մարտահրավերների ըմբռնում։

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՍՊԵԿՏ

ՔՀԿ-ների պրոֆիլներին մուտք գործելը, համակարգումը և ժամանակացույցի աջակցությունը կապահովվի «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի կողմից։

Փորձագետ(ներ)ը/փորձագետների խումբը կաշխատի(են) անմիջականորեն ծրագրի թիրախ ՔՀԿ թիմերի հետ՝ «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի ծրագրի ղեկավարի մասնակցությամբ։

5. ԴԻՄՈՒՄԻ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Հետաքրքրված մենթորներին հրավիրվում է ներկայացնել դիմում, որը ներառում է հետևյալը՝

1. **Թարմացված ինքնակենսագրություն՝** ընդգծելով հետաքրքրության թեմաներին համապատասխանող մենթորինգի, կարողությունների զարգացման և տեխնիկական ոլորտներում համապատասխան փորձը։
2. **Ուղեկցող նամակ** (առավելագույնը 1 էջ), որում նշված կլինի՝
   - Թեման(ները), որոնց համար նրանք դիմում են որպես մենթոր;
   - Նրանց մոտիվացիան և համապատասխան որակավորումները։
3. **Առաջարկվող մենթորական մոտեցման ամփոփում** , ներառյալ՝
   - Հիմնական գործողություններ կամ մեթոդներ, որոնք նրանք կօգտագործեն մենթորություն իրականացնելու համար;
   - 3-օրյա (24 ժամվա) ժամանակահատվածի համար նախնական ժամանակացույց;
   - Տեսլական, թե ինչպես է աջակցությունը նպաստելու ՔՀԿ-ների կարիքներին։
4. **Առնվազն մեկ հղում/երաշխավորում** նախկինում կատարած մենթորինգի, վերապատրաստման կամ ֆասիլիտացիայի փորձից։
5. **Ֆինանսական առաջարկ,** որը նշում է 3-օրյա (24 ժամվա) մենթորական աշխատանքի համար սպասվող ընդհանուր վարձատրությունը։ Այն պետք է ներառի՝
   - Օրական դրույքը կամ ընդհանուր գումարը;
   - Բոլոր կիրառելի հարկերը;

- Հստակ նշում այն մասին, թե արդյոք գինը ներառում է ճանապարհորդության, կապի կամ այլ հարակից ծախսեր (եթե կիրառելի է):

Նշում . Դիմորդները կարող են դիմել մի քանի թեմաներով մենթորություն ապահովելու համար՝ հիմնվելով իրենց մասնագիտական փորձի վրա: Եթե ՔՀԿ-ները նույնականացրել են նմանատիպ թեմաներ, մենթորության հանդիպումները կարող են համատեղվել՝ խմբային ուսուցումը և արդյունավետ իրականացումը խթանելու համար: Այնուամենայնիվ, խրախուսվում է, որպեսզի **նման հանդիպումները սահմանափակվեն մեկ խմբում առավելագույնը երկու ՔՀԿ-ով՝ որակյալ և կենտրոնացված փոխազդեցություն ապահովելու համար:**

Իրավաբանական անձանց դիմելու դեպքում՝ պետք է ներառել կազմակերպության կամ ընկերության պրոֆիլը, ինչպես նաև առաջարկվող մենթոր(ներ)ի/փորձագետ(ներ)ի պրոֆիլը, ներառյալ նրանց ինքնակենսագրությունները, հասանելիությունը և հրապարակված աշխատանքները:

6. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՄԵՆՏՈՐ(ՆԵՐ)Ի ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Գնահատման չափանիշներ

Համապատասխան աշխատանքային փորձ (նվազագույնը 3 տարի ՔՀԿ-ների կարողությունների զարգացման ոլորտում) *(CV-ի և մոտիվացիոն նամակի ապացույց)*

Հետաքրքրության առարկայի (թեմաների) վերաբերյալ ապացուցված գիտելիքներ *(CV և մոտիվացիոն նամակի ապացույց)*

Ֆասիլիտացիայի, մենթորական և/կամ խորհրդատվություն տրամադրելու հմտություններ *(CV-ի ապացույց)*

Մենթորական մոտեցում (մեթոդաբանություն, անհատականացում, ժամանակացույց)

Նորաստեղծ ՔՀԿ-ների առջև կանգնած մարտահրավերների ըմբռնում *(մոտիվացիոն նամակի և մենթորական մոտեցման ապացույցներ)*

Տրամադրված հղում(ներ)ը/երաշխավորագրերը

Ֆինանսական առաջարկ (ծախսարդյունավետություն և պարզություն)

7. ԻՆՉՊԵՍ ԴԻՄԵԼ

Դիմումի փաթեթները պետք է էլեկտրոնային եղանակով ներկայացվեն procurement.armenia@peopleinneed.net հասցեին՝ թեմայի տողում նշելով ***«Դիմակայուն քաղաքացիական հասարակություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում»*** :

Վերջնաժամկետ՝ **2025 թվականի հուլիսի 10, ժամը 18:00:**